

տարբեր դադարներ են, այնպես որ Արիստոտել անգամ իր իմաստասիրական տեսություններուն մէջ՝ հոն, ուր Ստորոգութիւններու վարդապետութիւնը կուտայ թուելով դադարի զանազան տեսակները՝ կը զանազանէ անջատ ստորոգութիւններ գոյացութիւնը (անուն) եւ որակը (յատկութիւնը իրեն՝ այսինքն ածական), որմէ կը հետեւի թէ տարբեր բաներ են եւ թէ չէ կարելի նոյնացնել զանոնք:

Արդ, եթէ անջատելու է գոյականը ածականէն, դերբայը նկատելու է խօսքի մասերէն մին, եւ յօդը, ինչպէս տեսանք, պատշաճ է որ մասնէ թրքեւ խօսքի մաս՝ կ'ունենանք այն ատեն խօսքի 10 մասեր, ինչպէս որ արդէն Հ. Թ. Թումանյան իր քերականութեան մէջ կը սորվեցնէ: Ոչ մէկ զարմանալի բան կայ հոս. դադարները դասակարգելու խնդիր է, Ծրանսացիք 9 հատ կը նշանակեն խօսքի մասերը, Գերմանացիք 10 հատ կ'աւանդեն, մէջն առնելով ԹՈՒԱԿԱՆԸ (das Zahlwort): Ասոնց քով՝ ինչպէս Ծրանսացիներու՝ դերբայը նկատուած է իրբեւ խօսքի մաս:


Հ. Թ. Թ. ի քերականութեան բերած նորութիւններու շարքին յիշելու է նաեւ բայերու լծորդութեան կարգին մէջ դրած կանոնաւորութիւնը՝ համաձայն ձայնաւորներու դիրքին՝ ալ, ել, իլ, հակառակ Գաղանճանին որ չըջած է կարգը: Նկատմամբ Թողով բային, դիտցած է իր պատշաճ տեղը դնել զայն՝ յետ կանոնաւոր երեք լծորդութիւններու, եւ ոչ թէ Գաղանճանի պէս՝ անկանոններու շարքին, վասն զի ոչ մէկ անկանոնութիւն ունի, ալ միակ բայն է՝ որ ուլ վերջաւորութեամբ մնացած է աշխարհաբարի մէջ,

մինչդեռ իր նմանները վերածուած ձեւ մը ունին այսօր. այսպէս առնուլի տեղ առնել, ընթեռնուլ (կարգալ), զգնուլ (հաղուլ), երդնուլ (երդուրնալ), լնուլ (լեցնել), յեմուլ (կոթնել), դիզուլ (դիզել), լիզուլ (լիզել, լզել), կիզուլ (կիզել, ալբել), յաւելուլ (աւելցնել), ցասնուլ (բարկանալ), պակնուլ (վախնալ), սարտնուլ կամ շրտնուլ (խրաչել), հեղմնուլ (խեղդուլ), ջեռնուլ (տաքնալ), զգածնուլ (յուզուլ), ոստնուլ (ցատկել), զրօսնուլ (զուարճանալ), զարքնուլ (արթընալ), ընկեմնուլ (մգել), զեմնուլ (մորթել), եւն, եւն:

Յետ կանոնաւոր լծորդութիւններու՝ դրուած է նաեւ միտակամ խոնարհումը բայերուն, առլով զանազան պարագաներու օրինակներ. մանաւանդ ներկայի չեմ, չես, չի, չ' դործածութիւններուն, որոնց մէջ նոյնիսկ մեր լաւ գրողները կը սխալին:

Անշուշտ պիտի ըլլան ոմանք, որ պիտի գտնեն հոն թերութիւններ, ինչպէս ամէն մարդկային գործի մէջ. ամէն պարագայի տակ մեծարգոյ Հօր քերականութիւնը կը հասնի լիուլի իր նըպատակին, սորվեցնելու հայ տղուն՝ հայերէն լեզուի տարբեր պարզ ոճով: Եւ այս յաջողութեան համար շնորհաւորելի է եւ մաղթելի, որ լայնօրէն մուտք գտնէ իր դործը մեր ազգային վարժարաններուն մէջ: Կրնամ վստահօրէն ըսել որ իր աշխատութիւնը ամէնէն արդիական ձեւով յայտնուածն է մինչեւ հիմա կատարուած քերականութիւններուն մէջ, եւ հետեւաբար անմիտելի է իր գտնելիք ընդունելութիւնը:

Հ. Մ. Ճ.



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Կէս կատակ կէս շիտակ. - Կիսամեայ երգիծաբեր. Թիւ 1-17, 1946.

David Magie. - Հոռմեական քաղաքականութեան նպատակը Հայաստանի և Անդրկովկասի մէջ. Թրգմ. Հ. Պէրպլեան, 1939, Փարիզ.

Հ. Պէրպլեան. - Արշակ Բ. և Քէոսողու, 1938, Փարիզ.

Ջարուհի Պաճիրի. - Տաղը (վէպ), 1941, Փարիզ.

Ջարուհի Պաճիրի. - Փառանձեմ (վէպ), 1946, Փարիզ.

Գ. Գ. Բիրոյի. - Հայաստան Հայերէն տառ. Ուրարտու Անդրկովկասի ամենահին պատու. թիւը, Փարիզ, [Լեւոն Խարեան Հայագիտական Մատենաշար. Թիւ 1].

Ժողով լորան. - Գուրգէն Արծրունի (Թ. զարու հայ աւատական իշխան մը). Թրգմ. Հայկ Պէրպլեան, Փարիզ, 1946. [Լեւոն Խարեան Հայագիտական Մատենաշար. Թիւ 2].

A. Atanassian. - Témoignages sur l'origine des arméniens (préface par H. Turabian). Paris, 1945.

Leon Z. Surmelian. - I ask you, Ladies and Gentlemen, New York, 1945.

Ուրիել Սարգիս. - Հայն ու աշխարհը. կարճ պատմութիւններու հաւաքածոյ մը Ուրիել Սարգիսի գործերէն. Թրգմ. անգլիերէնէ Սամուէլ Յ. Թումանյան, Աթիւն-Լիբանան, 1940.

Սամուէլ Յ. Թումանյան. - Քաղաքական միտք, «Պայքար» Տպարան, 1941.

Սամուէլ Յ. Թումանյան. - Հայաստանայ Ասար. Եկեղեցւոյ բարեկարգութեան հրատապ հարցը, Պէյրութ, 1945.

Վահրամ Տառնան. - Նեւի Պեւա. իր անցեալը - Քոյր Աննա (երեք նորավէպեր Պոլսահայ կեանքէն). Նիւ Եորք, 1946.

Պարոտ Ա. Վէյզի. - Ամերիկահայ պատկերներ. Նիւ Եորք, 1944.

C. N. Arménien d'Egypte. - La cause arménienne, en base des faits historiques et traités internationaux. Le Caire, 1946.

Եղիազար Տ. Աղաքեանց. - Երեք հազարի երազը, Նիւ Եորք, 1945.

Population. - Revue Trimestrielle, Avril-Juin, 1946, Paris.

Artin K. Shalian. - Pagan idylls, New York, 1939.

NEW STUDY

